ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 21/21

10.09.2021թ. ք. Երևան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին և 81-րդ հոդվածին:

Ըստ Դիմողի՝ Որոշմամբ նախատեսված կարգավորումները խախտում են կրթության սահմանադրական իրավունքի կարևորագույն անքակտելի բաղադրիչը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությանը և կարող են հանգեցնել այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Վիճարկվող որոշման փոփոխություններով երեք բուհերի հոգաբարձուների խորհուրդների թվակազմը սահմանվել է օրենքով նախատեսված նվազագույն շեմը՝ 20 անդամ՝ հետևյալ համամասնությամբ՝ հիմնադրի կողմից 55 տոկոս կամ 11 հոգի, պետական կառավարման լիազոր մարմնի կողմից՝ 10 տոկոս կամ 2 հոգի, բուհի պրոֆեսորադասախոսական կազմից՝ 10 տոկոս կամ 2 հոգի, ուսանողական համակազմի ներկայացուցիչներից՝ 25 տոկոս կամ 5 հոգի:

Այս կարգավորումներով ստացվում է, որ նշված երեք բուհերում Հայաստանի Հանրապետության վարչապետի և լիազոր մարմնի կողմից նշանակված անդամները կազմելու են խորհրդի 65 տոկոսը:

Ընդ որում, ուսանողների ներկայացվածության 25 տոկոսն էլ չի փոփոխվել՝ հաշվի առնելով «Կրթության մասին» օրենքի պահանջը:

Ենթաօրենսդրական մակարդակում բուհերի կառավարման բարձրագույն մարմնի կազմի համամասնության այնպիսի փոփոխությունը, որով նվազում է պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողության ներկայացուցիչների ներկայացվածությունը, ուղղակիորեն հակասում է կրթության իրավունքի առանցքային բաղադրիչի՝ բուհական ինքնավարության երաշխավորմանը:

Ընդունելի չի կարող լինել նախագծի հիմքում ընկած այն տրամաբանությունը, որ կառավարման խորհուրդների ներկայացուցչական համամասնության հավասար բաշխվածությունը բացասաբար է անդրադառնում հոգաբարձուների խորհուրդների՝ կառավարչական որոշումներ կայացնելու օպերատիվության վրա, որոշ դեպքերում հանգեցնում խորհուրդների նախագահների և ռեկտորների ընտրության գործընթացի արգելափակմանը՝ տարբեր բուհերում խորհուրդները դարձնելով խմբային շահերի հակամարտության հարթակ և փաստացի կաթվածահար անելով հաստատության բնականոն գործունեությունը:

Բանն այն է, որ ըստ հրապարակված տեղեկությունների՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի՝ կառավարության և լիազոր մարմնի նշանակած անդամները հրաժարական են ներկայացրել առանց պատճառաբանությունների, ինչի արդյունքում էլ ստեղծվել է խորհրդի բնականոն գործունեությունը խաթարող իրավիճակ: Ստացվում է, որ Կառավարության որոշմամբ փորձ է արվում կարգավորելու մի իրավիճակ, որը ստեղծվել է հենց կառավարության և լիազոր մարմնի նշանակած անդամների հրաժարականի արդյունքում: Ընդ որում, ասվածը հաստատվում է նաև նրանով, որ չի էլ ներկայացվել որևէ պաշտոնական պարզաբանում այդ հրաժարականների պատճառների վերաբերյալ:

Կարևոր է նաև նկատի ունենալ, որ ընթացքում նիստեր չեն կայացել լիազոր մարմնի նշանակած անդամների չներկայանալու պատճառով: Ընդ որում, կարևոր է նկատի ունենալ, որ լիազոր մարմնի անդամներն, օրինակ, նշված նիստին չեն մասնակցել միասնաբար՝ առանց բացառության:

Կրթության ոլորտին և բուհերի գործունեությանն առնչվող միջազգային իրավական փաստաթղթերի համապարփակ դիտարկումը ցույց է տալիս, որ բուհական ինքնակառավարումն, այդ թվում՝ ինքնավարությունն առանցքային դերակատարություն ունի բուհական համակարգի պատշաճ կազմակերպման և արդյունքում՝ կրթության իրավունքի երաշխավորման համար: Այդ ինքնավարության բովանդակությունը ներառում է նաև կառավարման ինքնուրույնությունը, ինչն ուղղակիորեն թիրախավորվում է վիճարկվող կարգավորումներով:

Հատուկ է պետք նշել, որ բուհերի ինքնակառավարման իրավունքի երաշխավորումը սկսվում է հոգաբարձուների մարմնի ձևավորումից՝ հոգաբարձուների խորհուրդների անդամների նշանակումով՝ որպես ինքնակառավարման հիմք: Առանց այս առանցքային բաղադրիչի հնարավոր չի լինի ապահովել ընթացիկ ինքնակառավարումը: Այլ կերպ ասած՝ ինքնակառավարումը բուհի կառավարման մարմնի ձևավորման և ընթացիկ գործունեության բաղադրիչների միավորում է:

Կառավարության նախաձեռնած որոշմամբ նախատեսվում է, որ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի նշանակած անդամները պետք է կազմեն բուհի ինքնակառավարման մարմնի մեծ մասը և որոշիչ ազդեցություն են ունենալու բուհի կառավարման վերը նշված բոլոր հարցերի վրա: Իսկ բուհի հոգաբարձուների խորհրդի Վարչապետի ու լիազոր մարմնի առաջադրած անդամների նկատմամբ էլ որոշիչ ազդեցություն են ունենալու հենց նրանց նշանակած պաշտոնատար անձը կամ մարմինը: Նրանց համար նույնիսկ գոյություն չունեն անկախության երաշխավորման երաշխիքներ ու չեն էլ կարող լինել: Այն, որ նրանց վրա գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կամ լիազոր մարմինն ունենալու են որոշիչ ազդեցություն և այդ ազդեցությամբ կարող է բուհի ինքնակառավարումը խաթարվել, վկայում է հենց գործող պրակտիկան (օրինակ՝ լիազոր մարմնի առաջադրած անդամների հրաժարականները՝ առանց պատճառաբանության կամ նրանց միասնաբար չներկայանալը խորհրդի նիստերին):

Ընդ որում, Կառավարությունն իր նախաձեռնությունը չի կարող արդարացնել անգամ հավաստիացումով այն մասին, որ ինքը կսպասի ՍԴ որոշմանը և մինչ այդ չի կազմակերպի ռեկտորի պաշտոնում հիմնական ընտրություն, այլ կսահմանափակվի ժամանակավոր պաշտոնակատար այդ ժամանակահատվածում նշանակելով: Հարցն այն է, որ ռեկտորի պաշտոնակատար լինել կամ չլինելն ընդամենը ֆորմալ բնույթ է կրում, քանի որ կարևորը հոգաբարձուների խորհրդի գործունեությունն է: Ռեկտորը կամ նրա

պաշտոնակատարն ընդամենը պաշտոնատար անձ է, ով իրականացնում է օպերատիվ հարցերով կառավարումը:

Կառավարությունը առաջացած վիճակը և Որոշման իր նախաձեռնությունը հիմնավորում է նաև նրանով, որ առաջացել է ճգնաժամային, խնդրահարույց վիճակ, որը պետք է հրատապ կարգավորվի և այդ կարգավորումը կարող է միայն իրականացնել ինքը՝ Կառավարությունը: Ըստ Կառավարության և լիազոր մարմնի՝ դա բխում է հենց բուհի շահերից:

Սա անընդունելի մոտեցում է, քանի որ Կառավարությունը չի կարող լինել այս իրավիճակի հանգուցալուծողը: Առավել ևս, Կառավարության միջամտությունների տարբեր դրսևորումներ մինչ այժմ ոչ միայն չեն լուծել բուհերի հետ կապված խնդիրները, այլ նաև առավել խորացրել են դրանք: Չի կարող իր թույլ տված ոչ ճիշտ քայլերի կամ պոզիտիվ պարտավորությունը չկատարելու հետևանքով առաջացած ճգնաժամային կամ խնդրահարույց վիճակի պատասխանատվությունը դնել այդ վիճակի զոհի, կոնկրետ դեպքում՝ բուհի վրա ու նախատեսել իր համար բուհի նկատմամբ միջամտության ավելի բարձր սահմաններ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին և 81-րդ հոդվածին:

Վիճարկվող իրավական ակտի բովանդակությունը հետևյալն է.

«1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 1408-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 27-րդ կետում՝

ա. «խորհրդի անդամների թիվը 32 է» բառերը փոխարինել «խորհրդի անդամների թիվը 20 է» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Խորհուրդը համարվում է ձևավորված, եթե նշանակվել են խորհրդի անդամների կեսից ավելին։».

2) 28-րդ կետում «25 տոկոսը» բառերը փոխարինել «10 տոկոսը» բառերով.

3) 30-րդ և 31-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. Հիմնադրի անունից հոգաբարձուների խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 55 տոկոսը)։

31. Լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (խորհրդի կազմի 10 տոկոսը)։».

4) 38-րդ կետից հանել «հոգաբարձուների խորհրդի որոշմամբ» բառերը։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 138-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 26-րդ կետում՝

ա. «խորհրդի անդամների թիվը 24 է» բառերը փոխարինել «խորհրդի անդամների թիվը 20 է» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Խորհուրդը համարվում է ձևավորված, եթե նշանակվել են խորհրդի անդամների կեսից ավելին։».

2) 27-րդ կետում «25 տոկոսը» բառերը փոխարինել «10 տոկոսը» բառերով.

3) 29-րդ և 30-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29. Հիմնադրի անունից հոգաբարձուների խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 55 տոկոսը)։

30. Լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (խորհրդի կազմի 10 տոկոսը):».

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 1031-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 26-րդ կետում՝

ա. «խորհրդի անդամների թիվը 24 է» բառերը փոխարինել «խորհրդի անդամների թիվը 20 է» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Խորհուրդը համարվում է ձևավորված, եթե նշանակվել են խորհրդի անդամների կեսից ավելին:».

2) 27-րդ կետում «25 տոկոսը» բառերը փոխարինել «10 տոկոսը» բառերով.

3) 29-րդ և 30-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29. Հիմնադրի անունից հոգաբարձուների խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 55 տոկոսը):

30. Լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (խորհրդի կազմի 10 տոկոսը):».

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Այսպես, ըստ վիճարկվող որոշման՝ ստացվում է հետևյալը.

1. ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի և ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 20 է:

2. Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 10 տոկոսը:

3. Հիմնադրի անունից հոգաբարձուների խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 55 տոկոսը):

4. Լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (խորհրդի կազմի 10 տոկոսը):

Նախքան Որոշման սահմանադրականության հարցին անդրադառնալը նշենք, որ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը Սահմանադրական դատարանում վիճարկման առարկա է: Նշված օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում է, որ հանրային բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամից՝ հետևյալ համամասնությամբ՝

1) չորսը՝ բուհի ակադեմիական խորհրդի առաջադրմամբ բուհի հետ համագործակցող կազմակերպությունների, գիտամանկավարժական անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչներից, որոնց ներկայացվող պահանջները և առաջադրման կարգը սահմանվում է սույն հոդվածի 4-րդ մասով և բուհի կանոնադրությամբ,

2) հինգը՝ համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը՝ գործարարների, կրթության, գիտության, մշակույթի կամ գործատուների (բուհի մասնագիտական ոլորտը սպասարկող ոլորտների) ներկայացուցիչներից:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը Հանրապետության նախագահը չի ստորագրել և դիմել է Սահմանադրական դատարան դրա սահմանադրականությունը գնահատելու համար:

Բուհական համակարգին և, մասնավորապես, կառավարման խորհուրդների կազմերի ձևավորմանը վերաբերող օրենսդրական փոփոխությունների գործընթացը բուհական համայնքի մտահոգության առարկան է եղել դեռևս «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի շրջանակներում:

Կարծում ենք, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի խնդրո առարկա դրույթների սահմանադրականության վիճարկման պայմաններում նույն հարցի վերաբերյալ նույն լուծումները պարունակող կարգավորումների ամրագրումը կառավարության որոշմամբ խնդրահարույց է և՛ բովանդակային, և՛ ընթացակարգային առումներով:

Դիմումով վիճարկվող դրույթներն ամրագրող նախագծի հանրային քննարկման գործընթացը լիարժեք չի ապահովվել: Վիճարկվող կարգավորումներն ընդունվել են դեռևս հանրային քննարկումների ժամկետը չավարտած՝ շրջանցելով դրանց քննարկման և ընդունման ընթացակարգերը: Մինչդեռ, օրենսդրական գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով հանրային քննարկումները պետք է անցկացվեն նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունման համար սահմանված ընթացակարգային պահանջների պահպանմամբ: Այդ պահանջների չպահպանումը խնդրահարույց է այն հիմնավորմամբ, որ հանրային քննարկում չանցկացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու դեպքում իրավական ակտերը կընդունվեն առանց հասարակության, այդ թվում՝ շահագրգիռ անձանց կարծիքները բացահայտելու և նախագծի ընդունման հետևանքով առաջացող ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների ստացման:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքը բխում է սահմանադրորեն երաշխավորված ինքնակառավարման իրավունքից, ինչը ենթադրում է, որ պետության կողմից պետք է բացառվեն բարձրագույն կրթության համակարգի նկատմամբ քաղաքական վերահսկողությունը, ակադեմիական անկախության սահմանափակումը և շահերի բախումները՝ բարձրագույն ուսումնական

հաստատությունների կառավարման մարմիններում: ԲՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդում 65 տոկոս կառավարության ներկայացուցչությունը ոչ այլ ինչ է, քան քաղաքական մեծ լծակ դրա կառավարման նկատմամբ:

Կրթության ոլորտի միջազգային փաստաթղթերը կանխորոշել են բուհական ինքնավարության ու ակադեմիական ազատության բովանդակային շրջանակներն ու դրանց առնչությունը կրթության իրավունքի լիարժեք իրացմանը: Մեջբերենք Դիմողի կողմից իրավացիորեն հիշատակված մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք անդրադարձ են կատարում բուհերի ինքնավարության երաշխավորմանը:

Այսպես, բուհերի ինքնավարության մասին սկզբունքներ է պարունակում «Magna Charta Universitatum»-ը: Վերջինս ստորագրել են Եվրոպական և դրա սահմաններից դուրս 388 բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ և ղեկավարներ: Այն ստորագրած 88 երկրների 904 համալսարանների թվում է նաև Երևանի պետական համալսարանը:

Փաստաթուղթը պարունակում է ակադեմիական ազատության և ինստիտուցիոնալ ինքնավարության սկզբունքներ ՝ որպես ապագա բուհերի կառավարման ուղեցույց: «Magna Charta Universitatum»-ի հիմնարար սկզբունքներն ընդգծում են ինստիտուտների՝ քաղաքական և տնտեսական առումներով անկախ լինելու անհրաժեշտությունը:

Եվրոպական համալսարանների ասոցիացիան, անդրադառնալով բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությանը, նշում է, որ ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները քննարկում և որոշում են երկարաժամկետ ռազմավարական հարցեր, ինչպիսիք են՝ կանոնադրություններն ու բյուջեն, ինչպես նաև ակադեմիական հարցեր, օրինակ՝ ուսումնական ծրագրերն ու առաջխաղացումները: Եթե այդ մարմիններում ընդգրկվում են նաև այնպիսի անդամներ, որոնք չեն ներկայացնում ուսումնական հաստատությունը և ներգրավված են հիմնարար ինստիտուցիոնալ որոշումների ընդունման հարցերում, կարևոր է, որ բուհերն իրենց խոսքն ասեն վերջիններիս նշանակման հարցում:

Բազմաթիվ հռչակագրերում Եվրոպական համալսարանների խարտիան վերահաստատել է բարձրագույն ուսումնական հաստատությունների և հասարակության համար ինստիտուցիոնալ ինքնավարության կարևոր դերը: Թեև ինքնավարությունն ինքնին նպատակ չէ, այնուամենայնիվ, այն կարևոր նախապայման է Եվրոպական համալսարանների հաջողության համար:

Համալսարանների միջազգային ասոցիացիայի «Ակադեմիական ազատությանը և համալսարանի ինքնավարությանը սպառնացող վտանգների մասին» վերլուծության համաձայն՝ պետությունների պարտականությունը ոչ թե համալսարաններին վերահսկելն է, այլ կարգավորելն ու հաշվետվողականության և ինքնավարության հավասարակշռությունը երաշխավորելն է: Պետությունը նաև պարտավոր է պաշտպանել բարձրագույն ուսումնական հաստատություններին արտաքին աղբյուրներից դրանց ինքնավարությունը սպառնացող վտանգներից: Միևնույն ժամանակ, համալսարանական ղեկավար կազմը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ինքնավարությունը չպետք է օգտագործվի որպես պատրվակ բարձրագույն կրթության հաստատությունների դասախոսական կազմի իրավունքները սահմանափակելու համար:

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականի 18-րդ կետի համաձայն՝ ինքնավարությունը ակադեմիական ազատության ինստիտուցիոնալ ձևն է ու անհրաժեշտ նախապայման բարձրագույն ուսումնական հաստատություններին և դասախոսական կազմին վերապահված գործառույթների պատշաճ իրականացման համար: Հանձնարարականի 19-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունը նաև պարտավոր է պաշտպանել բարձրագույն ուսումնական հաստատություններին դրանց ինքնավարությունը արտաքին աղբյուրներից սպառնացող վտանգներից: Իսկ 21-րդ կետն ամրագրում է, որ ինքնակառավարումը, կոլեգիալությունը և համապատասխան ակադեմիական առաջնորդությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների նպատակային ինքնավարության էական բաղադրիչներն են:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) «Բուհական կրթություն գիտելիքի հասարակության համար» աշխատության համաձայն՝ ինքնավարությունը ոչ թե աշխատողների, այլ ինստիտուտի՝ սեփական նպատակները սահմանելու և սեփական գործերը կառավարելու իրավունքն է առանց պետության միջամտության: Նույն աշխատությամբ առաջարկվում է կառավարություններին, որ վերջիններս գտնեն ողջամիտ հավասարակշռություն Կառավարության կողմից ղեկավարման և ինստիտուցիոնալ ինքնավարության միջև:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) «Բարձրագույն կրթության ոլորտում կառավարման և որակի ուղեցույցների» համաձայն՝

արտաքին կառավարման համակարգի կողմից միջամտության մակարդակը կարող է սահմանափակել ինստիտուցիոնալ ինքնավարությունը, այն կարող է ազդել ակադեմիական ազատության վրա և ստիպել հաստատություններին կայացնել որոշումներ, որոնք հակասում են իրենց ինքնությանը կամ զարգացման ռազմավարությանը: Բարձրագույն կրթության կարևոր ներդրումը սոցիալական համախմբվածության և տնտեսական աճի գործընթացում պահանջում է, որ բոլոր կառավարությունները սահմանեն համընդհանուր ռազմավարություն բարձրագույն կրթության համակարգի համար:

Այսպիսով, կրթության ոլորտին և բուհերի գործունեությանն առնչվող միջազգային իրավական փաստաթղթերի համապարփակ դիտարկումը ցույց է տալիս, որ բուհական ինքնակառավարումն, այդ թվում՝ ինքնավարությունն, առանցքային դերակատարություն ունի բուհական համակարգի պատշաճ կազմակերպման և արդյունքում՝ կրթության իրավունքի երաշխավորման համար: Այդ ինքնավարության բովանդակությունը ներառում է նաև կառավարման ինքնուրույնությունը, ինչն ուղղակիորեն թիրախավորվում է վիճարկվող կարգավորումներով:

Բուհի պարագայում հոգաբարձուների խորհուրդը բուհի կառավարման բարձրագույն մարմինն է, ուստի այն սկզբունքային ազդեցություն ունի գործունեության հիմնարար ուղղությունների, այսինքն՝ բուհի ինքնակառավարման նկատմամբ: Բուհերի ինքնակառավարման իրավունքի երաշխավորումը սկսվում է հոգաբարձուների մարմնի ձևավորումից՝ հոգաբարձուների խորհուրդների անդամների նշանակումով՝ որպես ինքնակառավարման հիմք: Ինքնակառավարումը բուհի կառավարման մարմնի ձևավորման և ընթացիկ գործունեության բաղադրիչների միավորում է: Իսկ բուհի հոգաբարձուների խորհրդում 65 տոկոս Կառավարության ներկայացուցչությունը (55% Վարչապետի կողմից նշանակվող և 10%՝ լիազոր մարմնի կողմից) ոչ այլ ինչ է, քան քաղաքական մեծ լծակ բուհի կառավարման նկատմամբ: Ավելին, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցչությունը կազմելու է փոքրամասնություն և կայացվող որոշումների վրա բացարձակ ոչ մի ազդեցություն չի ունենալու վերջիներիս կարծիքը, այսինքն՝ վերջիններիս ներկայացվածությունը խորհրդում ձևական բնույթ է կրելու:

Այսինքն՝ Որոշումն իր և՛ ընդունման ընթացակարգով, և՛ բովանդակային առումով թույլ է տալիս եզրակացնել, որ իշխանության կողմից փորձ է արվում սահմանափակել

(ըստ էության, ընդհանրապես վերացնել) բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը։ Ավելին, ընդունված Որոշումն իր բովանդակությամբ չի բավարարում նաև բուհերի ինքնավարությունը երաշխավորող մջազգային մի շարք իրավական փաստաթղթերի պահանջներից։

Վերջում հարկ ենք համարում մեջբերել Սահմանադրական դատարանի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 08-ի ՍԴՈ–1244 որոշման մեջ արձանագրված հետևյալ դիրքորոշումը. «…Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար: …. Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին։»։

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն որոշման համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին և 81-րդ հոդվածին խնդրահարույց է:

Recoverable Signature

Համակարգող՝ X Lyudvik Davtyan *Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169